

ԿԱՐԾԻՔ

ԱՆՆԱ ՍԱՄՎԵԼԻ ՀԱԿՈՒՅԱՆԻ

«ԻՆՏԵՆՆԵՐԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸ ՆԹԱՑՈՒՄ»

խորագրով ատենախոսության վերաբերյալ

Հանրակրթության պետական չափորոշչում որպես հիմնական դպրոցի շրջանավարտի առանցքային կարողունակություն սահմանվում է գիտատեխնիկական կարողունակությունը. սովորողներն առօրյա կյանքում օգտագործում են մտածողության տարբեր ոճեր՝ բնության, հասարակության, մշակույթի և աշխատանքային ոլորտի երևույթները ճանաչելու և դրանք կառուցվածքների, մոդելների միջոցով հասկանալու համար: Որպես հանրակրթական վերջնարդյունք աշակերտները պետք է կարողանան ընկալել բնագիտական-տեխնիկական մտածողության և աշխատանքի, ինչպես նաև տեխնիկական առաջընթացի միջև եղած փոխադարձ կապը, տեխնոլոգիական գիտելիքի կիրառման հնարավորությունները մարդու պահանջմունքների համատեքստում, ճանաչեն մարդու գործունեության արդյունքում ի հայտ եկող փոփոխություններն ու սեփական պատասխանատվությունը: Այս համատեքստում ատենախոսությունը, նվիրված դպրոցականի ինժեներական մտածողության ձևավորման հիմնախնդրին, արդիական է:

«Տեխնոլոգիա» առարկայի առարկայական չափորոշչում, որպես ուսուցման առանցքային նպատակներ, սահմանվում են ստեղծարար, նորարար, նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն ունեցող անձի ձևավորումը, որն արվեստին ու արհեստին հաղորդակցվելու, աշխատանքի ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր:

Այս համատեքստում աստենախոսի կողմից մեթոդական գործուն համակարգի առաջադրումը ունի տեսական և գործնական նշանակություն:

«Ինժեներական մտածողության ձևավորման տեսական հիմքերը» խորագրով առաջին գլխում ներկայացված՝ մտածողության ձևավորման առանձնահատկությունները, ինժեներական մտածողության ձևավորման հայեցակարգային մոտեցումները, հիրավի, արտացոլում են հիմնախնդրի լուծման վերաբերյալ արդի միտումները: Ակնառու է առկա մոտեցումների փոխազդեցիկ վերլուծություն և եզրահանգումները հեղինակի ինքնուրույն մտքի արգասիք են:

«Ինժեներական մտածողության ձևավորման արդյունավետ ուղիները հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում» խորագրով երկրորդ գլխում վերլուծվել են ինժեներական մտածողության ձևավորման և զարգացման որոշ մեթոդական մոտեցումներ, բացահայտվել են միջառարկայական կապերի և ՏՀՏ-ների կիրառման հնարավորությունները ինժեներական մտածողության ձևավորման գործում:

«Ինժեներական մտածողության ձևավորմանը նպաստող մեթոդական համակարգի փորձարարական հետազոտությունը» խորագրով երրորդ գլխում աստենախոսության տեսական դրույթները պրոյեկտվել են գործնական հարթություն:

Ներկայացվել է ինժեներական մտածողության ձևավորման և զարգացման մեթոդական գործուն համակարգ՝ ժամանակակից մեթոդների կիրառմամբ: Դրա արդյունավետությունը հաստատագրվել է գիտափորձով: Հաստատող փուլում լուծվել են մի շարք խնդիրներ՝ ինժեներական մտածողության ձևավորման և զարգացման չափանիշների մշակում, ինժեներական մտածողության բաղադրիչների առանձնացում, սովորողների ինժեներական մտածողության մակարդակի հայտորոշում՝ համապատասխան թեստերի միջոցով, Բլումի կրթական նպատակների աստիճանակարգումով: Վիճակագրական մեթոդի ընտրման հայտանիշները հիմնավոր են, արդյունքները ստույգ են և հաստատում են առաջադրված վարկածը:


Աշխատանքն առավել ընդգրկուն ու արժեքավոր կլիներ, եթե աստենախոսը ներկայացներ բնագիտամաթեմատիկական, ինչպես նաև որոշ խաչվող


հասկացությունների կիրառելիության շրջանակները միջառարկայական և բազմառարկայական իրադրություններում՝ այլ ուսումնական առարկաներում դրանց յուրացման մակարդակը որոշող առաջադրանքերի համաշարի միջոցով:

Աշխատանքի գործնական արժեքը նշանակալի կլիներ, եթե ներկայացված լինեին նաև ինժեներական մտածողության ևս մեկ բաղադրիչի՝ մաթեմատիկական մտածողության ձևավորման որոշ առանձնահատկություններ՝ հաշվողական, չափողական, գծագրական և մոդելավորման բազմառարկայական հմտությունների զարգացման համատեքստում:

Նշված դիտարկումները, սակայն, դրվագային բնույթ են կրում:

«Ինժեներական մտածողության ձևավորման առանձնահատկությունները հիմնական դպրոցի «տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում» խորագրով ատենախոսությունը բավարարում է ԿԳՄՄՆ ԲՈԿ-ի կողմից ԺԳ.00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (ընդհանուր տեխնիկական առարկաների դասավանդման մեթոդիկա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոս Աննա Սամվելի Հակոբյանը արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ընդդիմախոս՝  մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ Քնարիկ Ասլանի Հովհաննիսյան

Ք. Ա. Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի գիտաբարձուղար
մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ  Մ. Մ. Իսախիրյան
22.11.2023թ.

